



Միսաք Մեծարեւնց

Վայրկյաններ

Ո՛վ սիրական խավարներ: Կենդանի՛ երագ

դանդաղ գիշերներու, ուր կի՛րքը միայն նայվածքներ
ունի: Ու մի՛շտ, մի՛շտ, անխոնջ կերպով, անպատում
մեկամաղձությունը համբույրին:

Ռեյնոն Պուլետո

Հրրայրքի մեջ գիշերը գայն կ'երագեմ,
շրթունքներըս պատրաստ իր մեղկ համբույրին.
բայց ժըխորին մեջ կը մոռնամ վերստին
այն պահերն՝ ուր գայն սիրած եմ մոլեգին:

Ու կը մոռնամ ես նուպաներն ալ բոլոր.
հորդ կիրքերու ժամերն ամեն ըղձածոր՝
երբ կ'իյնամ ոտքն իր տեսիլքին՝ մինչև որ
անշարժանամ պաղատանքիս մեջ մոլոր:

Ու չեմ հիշեր ցորեկն ասոնք, երբ խունկե
ա՛լ ավելի հեշտ բուրմունք մը մեղկօրոր
իւր ծրփանքին մեջ հույզերըս կը լլկե:

Այդ բուրումի եղկությունն, որ միշտ անկե

կը ծորի և կը պարուրե գիս՝ բոլոր
հոգիդ անծիր մոգությամբ մը կը խնկե: